

մահականացուաց մէջ գեղեցկագունին, կը ծնանին հիւսիսային կլիմայի տակ, ուսկից դառնաշունչ ձմերուան ատեն խմբովին մեկնելով, մեղմ օգերուն նուրէն կը վերադառնայ:

Բայց նոր և հետաքրքրական բան մը եղաւ Եւրոպայի մէջ վերջերս սեպտաբանոց կարափին (*cignus negricollis*) տեսնուիլը, որ թէպէտ գեղեցկութիւնն ու վայելելիութեամբը առաջնոյն չի հասնիր, մանաւանդ երբ առաքատները պարզած նաւու պէս բարձր կը բանայ լիւները, սակայն շատ կը զարմացնէ զինքը տեսնելու բախտ ունեցողները:

Սեպտաբանոց կարափներուն հայրենիքը հարաւային Ամերիկան է: Ասոնցմէ նախկին օղջ Եւրոպա բերածները անգղիացի Տերպի կոմսը ստացաւ, որուն կենդանեաց ճոխ հաւաքմունքը մասամբ մը լոնտրայի կենդանաբանական ընկերութիւնը ժառանգեց: Այս կարափներէն զոյգ մը Վիկտորիա թագուհին առաւ: Երկու զոյգ լոնտրայի կենդանաբանական պարտիզը տարուեցան, ուր օղջ երկու հատ միայն մնալով, այն տեղ սկսան կանոնաւոր կերպով բաղմանալ: Սակայն այս տեսակ կարափներ Եւրոպայի մէջ դեռ մինչև ցայսօր սակաւագիւտ են: Եւ լոնտրայի կենդանաբանական պարտիզէն զատ կը յիշենք Բարիզ տեսած: Ինչպէս կը կարողանք թէ յԱմստերտամ և 'ի Գուրնիա ալ կը գրտնուին:

Այս գեղեցիկ թռչունը խաղաղ ու մեղմ օդին լողալով կը քալէ, որուն կոր ու ձիւնափայլ մարմինը կու գայ կը խառնուի երկայն, արագաշարժ ու սև պարանոցին հետ: Որ պզտի գլուխ մը կը կրէ, որուն վրայ գիւրակոր ցօղունի ծայրը գեղեցիկ ծաղկի նման մանղէն վարդազոյն սանտր մը ցրցուած է: Ոտքերը մին կարմրութիւն ունին: Իսկ ձայնը քաղցրահնչիւն է: Մեր սովորական կան կարափաց նման ասոնք ալ ընտաւի են և մարդաստի:

ՄԱՐԳԱՐՏԱԾԱՂԻԿ

Պերթը տիկինն, իմաստուն ու առաքինի մայր մըն էր. օր մը քաղքէն դուրս պտրտելու համար գէպ 'ի մեծ մարգագետին մը գնաց, և իր կալուածն էր: Գողմէն իր աղջիկը պզտի Մարիամը կ'երթար, ճերմակ զգեստ հագած և գլուխը յարդէ զլիարկ դրած: Գարնան ամենէն գեղեցիկ օրերէն մէկն էր, և մարգագետինն կանանչ երեսը սկսեր էր հազար ումէկ պզտի ծաղիկներով զարդարուիլ:

Ինչպէս երկինքը պարզ է այսօր, ազդակեց Մարիամ: Ինչ աղուոր կապոյտ գոյն է, և մեր մարգագետինը ինչպէս մէկ ծայրէն մէկալ ծայրը թարմ ու կաշանչ է: Ինչպէս այդ մանր ծաղկանց բաղմունքները, որոնցմով ծածկուած է, զուարթ տեսք մը կու տայ անոր: Ինչպէս գիշերը բոլոր երկինքն անթիւ մանր աստղերով կը փայլի, նոյնպէս ալ երկրիս վրայ չնայն տեղ մ'ալ գեղեցիկ ծաղկներով զարդարուած է: Ո՛հ, սրչափ կ'ուրախանամ տեսնալով թէ ինչպէս Աստուած իր ամէն ստեղծած բաները կարողացաւ զարդարել: Այս բռն լով, Մարիամ սկսաւ քանի մը ծաղիկ ժողուել: Եւ տեսցունց. իրաւցընէ գեղեցիկ և ամենայն կերպով սիրուն են: Մէջտեղի պզտիկ բոլորակը զարմանալի գեղին գոյն մը ունի, և իր փափուկ ու ճերմակ տերեւները ճառագայթներու պէս չորս զին կը պատեն: Կը տեսնաս, մայր իմ. այս ճերմակ և փափուկ ծաղկանց ծայրը աղուոր վարդի գոյն մը առեր է, և վերջը հոն վարդ այն պզտի կոկոնները գեղին և ճերմակ են, և մարգարտի նման բոլորաձև: Գիտեմ որ մենք զանոնք մարգաց ծաղիկ կը կոչենք. բայց սակայն բոլոր մարգաց մէջ մեծցած ծաղկներն ալ նոյնպէս կրնան կոչուիլ: Զուրցէ ուրեմն, սիրելի մայր, թէ այդ պզտի ճերմակ ծաղիկները զատ անուն մը ունին արդեօք:

— Այո, պատասխանեց մայրը, ոմանք մարգարտածաղիկ կը կոչեն, ոմանք ալ

ծաղիկ դալարոյ. վասն՝ զի չկայ տրօտ մը և ոչ դոյզն դալար մը: ուր անիկայ չփայլէ. կ'ըսուին նաև ծաղիկներ ամենայն ամառոց, վասն զի տարւոյն մէջ չըկայ ամիս մը, որ անիկայ չծաղկի, միայն թէ երկիրը ձեռամբ և սատով ծածկուած չլլայ. կը կոչուին նաև ծաղիկներ հաւուց, անշուշտ անոր համար որ իրենց կակուղ և փափուկ ցօղունները մանր թռչնոց հաճոյական կերակուր կ'ըլլան. վերջապէս բոլոր հիւսիսային կողմերը սովորաբար զանոնք ծաղիկ զգաստութեան անուամբ կը ճաննան:

— Ծաղիկ զգաստութեան, կանչեց Մարիամ. ահա հետաքրքրական անուն մը. բո՛ւ ուրեմն ինծի, աղիւս մայր, ինչո՞ւ համար և ինչ պատճառաւ անոնց այս անունը տուեր են:

— Եստ աղէկ չեմ գիտեր անոր, ճշմարտութեամբ. բայց կարծեմ թէ այս գեղեցիկ անունը անոր համար կը տրուի, ինչո՞ւ որ այս համեստ, ծաղկունքը, պարզ և անպաճոյճ զարդով մը կը շատանան, և այնու հանդերձ այլքի շատ աղուր կ'երևան, և զմեզ կը խրատեն որ մեր զարդարանքին մէջ ամեն նորասիրութենէ խորշինք և կարծեալ թէ կ'ըսեն մեզի. Սիրէ չափաւորութիւն ու պարզութիւն: կը տեսնեն այս պզտիկ ծաղիկները. միայն գեղին և ճերմակ գոյն ունին, քիչ մ'ալ կարմրով խառն, և այնու հանդերձ մեզի սիրուն կ'երևան: Գու աչսօրուան զարդդ ալ անոր կը նմանի: Ճերմակ գոյնս մը հագած ես, և զլուսիդ յարգէ գլխարկ մը դրած, պզտիկ կարմրագոյն ծապաւինով մը. և անիկայ քեզի համար ամեն փառաւոր գոյներէ աւելի աղէկ է և կը փափաքեմ որ ամեն բանի մէջ սիրես այս պարզութիւնը, որ ուրախութեամբ քու հաղուածքիդ վրայ կը տեսնեմ, և այսպէսով դուն ալ մէկ զգաստութեան ծաղիկ մը ըլլաս:

Մարիամ խոստացաւ, և վերջը աւելցուց.

Մտիկ բրէ, մայր իմ, գիտես որ մեր պարտիզին մէջ կանանչեղէն միայն ունինք, և ամենեւին ծաղիկ չկայ. եթէ

կ'ուզես, ինծի հրաման տուր որ անոնց մէջ քանի մը արմատ առնում, և ինծի ուզածս տնկելու համար տուած պարտիզիդ մէկ պզտիկ անիկունը մշակեմ զանոնք:

Եստ սիրով, պատասխանեց մայրը. կը գովեմ քու դիտաւորութիւնդ. վասն զի այդ պզտիկ ծաղիկներն ոչ միայն գեղեցիկ են, այլ և օգտակար տնկոյ կարգը կը սեպուին: Անոնց դալար տերեւներն աղցան ըրած կ'ուտեն և չովին, ներու հետ կրնան խառնուիլ:

Իբրև դեղ ալ կը գործածուին: Բարեկամներէս մէկը թորի հիւանդութենէ բռնուած ըլլալով, բժիշկը զինքը առողջացուց, այս պզտիկ տերեւներէ բաղադրած ըմպելիք մը տալով իրեն: Որով կը տեսնես որ այս սիրուն ծաղիկներն թէ օգտակար և թէ զուարճալի են:

Դարձեալ այս ալ դաս մըն է որ անոնք մեզի կուտան: Դանանք միշտ անոնցմով օգտուելու:

Երկրորդ օրը Մարիամ նորէն եկաւ մարգագետինը, հանեց շատ մը արմատ այն ծաղիկներէն, որոնց կոկոնները դեռ չէին բացուած, և զանոնք պզտիկ պարտիզի մը մէջ վայելուչ կարգով մը տնկեց, ինչ կերպով որ մօր կազմաւ և աղցան տնկելը տեսեր էր:

Հոգը խիստ պարարտ էր. և այս պզտիկ ծաղկանց վրայ մեծ հոգ ունեցաւ. չորս կողմի հոգը փորեց, հանեց այն գէշ խոտերն որ կրնային անոնց անդաբար հիւթոյն մաս մը առնուլ. և երբ շատ օր անձրև չէր գար՝ արթնութիւն կ'ընէր ջուր տալու:

Երբոր պզտիկ կոկոնները բացուիլ սկըսան, և վերջապէս պզտիկ ծաղիկներն և բնցան, Մարիամ քիչ զարմանք չունեցաւ, երբ տեսաւ որ իր սպասածէն բոլորովին տարբեր և մարգագետինն մէջ տեսածներէն շատ աւելի աղուր էին:

Այս ծաղիկներն չունէին այն պզտիկ թերթիկներն՝ որոնք մարգին մէջ եղածներուն փուշոյ դեղին անօթը կը պատէին. և նոյն իսկ այն խարտեալ բոլորապէս չափ աւելի մեծ եղեր էր, և թանձր

կամ անոյց կարմրութիւն մը ունէր. վերջապէս թէ՛ գոյնները և թէ՛ ձևերը շատ աւելի գեղեցիկ էին: Մարիամ վաղեց գտաւ մայրը, և աղաղակեց.

— Ե՛կ, մայր իմ, եկ տես ինչպէս բոյսերս աղէկ յաղողեր են, և այնչափ աղւորացած են այս ծաղիկները, որ պիտի չկարծես ճանշնալ: Տես, նայէ մէջ մը. չի կրնար ըսուիլ որ թաւիլով բաշտուած են:

— Այո, իրաւունք ունիս, ըսաւ մայրը: և երբոր ծաղիկներն այնպէս զարդարուած ըլլան, թաւյակերպ կը կոչուին: Ասով կը տեսնես թէ՛ ինչպէս ամանէն հասարակ բոյսն ալ, խնամքով և մշակութեամբ կրնայ գեղեցկանալ և կատարեալ ըլլալ:

Մարիամ այնչափ սքանչացած էր այս տղակերպութեան վրայ, որ գնաց մալգադեոսինը ուրիշ արմատներ գտաւ, և իր պարտիզին մէջ տնկեց, և կարգէ դուրս խնամքով մը մշակեց զանոնք, և այն ատեն զեռ ուրիշ փոփոխութիւն մ'ալ եղաւ: Ծաղիկն մէջ տեղի գեղնազոյն բոլորակը աներևութացաւ, և չորս կողմի տերևներն ամեն տեսակ գոյններ առին. այս ծաղիկներէն ոմանք ձևան պէս ճերմակ մնացին, և ոմանք ալ մուր կարմրութիւն մը ունեցան. և մէկը զանոնք քիչ մը հեռուէն տեսնալով, սքանչելի գեղեցկութեամբ պզտի վարդեր կը կարծէր: Մարիամ առջի անգամէն ոչ ինչ նուազ զուարթութեան զարմանքով լեցուած ուրախութենէն ցատքելով գէպ 'ի մօրը վաղեց, և կանչեց.

— Եկուր, սիրելի մայր, որ նոր բան մը տեսնես: Նայէ, ինչ սքանչելի բան կը մտածեմ, որ եթէ այսպէս շարունակեմ և հոգամ իմ պզտի ծաղիկներս, հազարաւոր տեսակներ պիտի ելլեն:

— Կրնայ ըլլալ ատիկա, ըսաւ մայրը. բայց կարծածիդ պէս արտաբոյ կարգի բան մը չէ: Արդէն քեզմէ շատ առաջ, խեղ մի ծաղկադարման պարտիզպաններ՝ գալացաց ծաղիկները մշակած են, և այսօրուան օրս կը տեսնենք որ դրեթէ ամեն պարտիզաց մէջ ա.

զուոր կը ծաղկին: Տես ուրեմն թէ ինչպէս խնամքով ու աշխատութեամբ բոլոր նութեան ամեն բերքերն կրնան աղւնուանալ և կատարեալագործուիլ: Ինչ բան որ քու պզտի բոյսերուդ համար կ'ըլլայ, նոյնը նաև ծառերուն ու պտուղներուն կը հանգիպի:

Այս պարտի ծաղիկներուն շատը, որոնց վրայ մեր պարտիզին մէջ կը դարմանանք, իրենց ծագումը գայտերու խեղճ ծաղկրներէն առած են. այն խընձորները ու տանձերը որ իրենց անոյց համին համար խիստ յարգի են, այն ծառերուն վրայ առաջ կու գան՝ որոնք ուրիշ անգամ վայրի պտուղներ կու տալին: Այսպէս ալ Աստուած կը վարձատրէ հանճարեղ և աշխատասէր մարդը, և զինքը բնութեան տէր կ'ընէ: Նոյն խել մարգա չի կրնար կատարելութեան հասնիլ՝ առանց իմաստուն և կարգաւորեալ կրթութեան: Ասիկա միայն ցաւալիք որ շատ տղաքներ այս պզտի ծաղկանց պէս դուրս կատարեալ չեն ըլլար. անոնցմէ շատերը իրենց յամառութեամբ, անհնազանդութեամբ և խելագարութեամբ՝ իրենց կրթութեան համար եղած աշխատութիւնները պաւրապ կը չանեն:

Նայէ ուրեմն, սիրելի աղջիկս, որ աղէկ ճանշնա քեզի տրուած բարի կըրթութեան յարգը, և այնպէս շարժէ որ զքեզ աւելի կատարեալ ընելու ծառայէ:

Մարիամին մշակած գեղեցիկ ծաղիկներն անճշման և օր օրուան վրայ կատարեալ եղան: Իր բոլոր պզտի բուրաստանը, որուն մէջ ամանիկն ուրիշ տեսակ ծաղիկ կամ բոյս չէր տնկել, բոլորովին ծածկուեցաւ, այնպէս որ հազար ծաղիկներով զարդարուած կանանչ մարգագետնի կը նմանէր: և տես նալով որ այնչափ ուժովցեր և աղեկցեր են, մտածեց որ ալ անօգուտ բան է հոգ տանիլը, և առանց աշխատելու թողուց որ անին:

Բայց ինչ զարմանք ունեցաւ, երբոր տեսաւ որ կամաց կամաց սկսան տկարանալ, և իրենց փայլը կորսնցուցին, և

վերջապէս պարտիզէն հաճած միջոցին պէս եղան :

— Ո՛հ, ըստ, ասիկայ շատ ցաւալի բան է . չէի կրնար կարծել որ այս այնչափ խնամքով մեծցուցած ծաղիկներս, որոնք այն ատեն զիս այնչափ ուրախաշուքէին և այնչափ արեւէկ յոյսեր տուին, այսօր այսչափ ցաւ պիտի պատճառեն : Ըսէ ինձի, սիրելի մայր, ասիկայ ինչէն առաջ կու գայ :

Մայրը պատասխանեց .

— Այս ցաւալի փոփոխման պատճառները դիւրին է ըմբռնել . և կրնան քեզի օգտակար խրատներ տալ : Նախ և առաջ զու այս ծաղիկներուն հող չտաւ ըրբ, չորս կողմի հողը անխնամ թողուցին, փոյթ չըրին չընպատար ջրոտելու և զանանկ տկարացրնող ու խղճող խոտերը քաղելու . այս պատճառաւ է որ, ինչպէս ուրիշ անգամ իրենք իրենց թուղուած ըլլալով տկար կ'աճին, հիմա ալ նոյնպէս տկար կ'աճին :

Յարատեւ և հաստատուն խնամքով միայն պզտի բոյսերը գեղեցիկ վիճակի մէջ կրնան պահուիլ . երբ անոնց վրայ մոտադրութիւն ընենք դադրի, կ'ապաւանան կամ կ'օտարանան : Նոյնպէս է նաև մարդու դաստիարակութիւնն ալ : Թող առաջին կրթութիւնն ինչպէս որ պէտք է կատարեալ ըլլայ, խիստ աղէկ կերպով կը յաջողի . եթէ վերջէն փոյթ չտարուի, եթէ մանկութեան հասակը ինքն իրեն թողուի, կ'աւրուի :

Մի անունիւր ուրեմն եթէ չատ անգամ հարկաւոր կը տեսնեմ զքեզ խրատելու, յանդիմանելու և քանի մը անգամ սաստիկ կշտաւեմքու : Տարակոյս չկայ որ այս պզտի ծաղիկները քու պարտիզիդ մէջ փոխադրելէջ 'ի վեր մեծցար և աւելի բարի ու աւելի խելաքի եղար : Բայց զեւ պէտք ունիս մօրդ արթուն հսկողութեամբ և խոհեմական խրատներուն : Ինչո՞ւ որ հլու և հնազունը ըլլաս, եթէ չես ուզեր այս ծաղիկներուն պէս աւրուիլ :

Ի՞նչայց ուրիշ մէկ պատճառ մ'ալ կայ որ քու պարտիզիդ վրայ եղած փոփոխութիւնը կը պարզէ : Ենք քառակու-

սի մարդին մէջ որ անմիջապէս քու պարտիզիդ քովն է, և չոր լաթները ճերմակցնելու համար պահած եմ, շատ մը պզտի հասարակ ծաղիկներ բուսած են :

Արդ փորձ եղող պարտիզականներն կ'ըսեն որ այս անխնամ ծաղիկներուն մօտաւորութիւնը աղէկ մշակուածներն կ'աւրէ, և քիչ ատենէն կ'ապականէ :

Այս դիտողութիւնը մեզի պէտք է մեծ բարոյական սկզբունք մը յիշեցընէ . մեծ փոյթ ունենալու է հեռու կենալու չար և աւրուած անձներ : Վասն զի չարքնկերութիւնը բարուց լաւութիւնը կը խանգարէ : Ասով կը տեսնաս նաև, սիրելի Մարիամս, որ Մատուած իր հայրական խնամքովը աշխարհս ստեղծելով, ամեն բանի մէջ բարի խրատներ դրած է . որոնք մեծապէս օգտակար կրնան ըլլալ խելացի մարդու մը, որ քննելով բնաւորութիւնը, կրնայ զանոնք դաժնել, և մանաւանդ օգտուիլ անոնցմով :

Այն օրերնէ ետեւ Մարիամ սկսաւ կրկնապատիկ եռանդով և խնամքով իր ծաղիկները մշակել . մէկդի ըրաւ բուրովին ինչ որ անոնց խնամակար կըրնար ըլլալ, և քիչ ատենէն ուրախա, ցաւ երբ տեսաւ իր սիրելի ծաղիկներուն աճիլը և օրէ օր աւելի աղւտորնալը :

Բայց Մարիամ, մի և նոյն ժամա, նաև չուզելով իր ծաղիկներէն աւելի նուազ խնամք տանիլ իր վրայ, մասնաւոր մոտադրութիւն ջրցուց իր մօրը խրատներուն և յորդորներուն, որպէս զի չըլլայ թէ անհանդարտութեամբ կամ խեղճութեամբ մայրական դաստիարակութեան արդիւնքը պարտապահանէ : Ընկերութենէ հեռու կեցաւ . և խելացի և առաքելի աշխիւ մը և, զաւ, և բոլոր իր պարտիզին ծաղիկներն աւելի զարմանալի կերպով մը զարգացան : Այն ատեն շնորհապարտ և բախտագիտութեամբ մը ճանչցաւ իր մօրը բարի դաստիարակութիւն մը տալով իրեն ըրած աղէկութիւնը :

Եւ երբոր մօրը տօնին օրը եկաւ, զինքը իր պզտի պարտէզը տարաւ և աշնիւ մայրը դորովանք տեսաւ որ՝ կա-

նանչ մարդին վրայ Մարիամայ տնկած ամեն աղուոր ծաղիկներով իր անունը ձևացած էր:

Այնիւ և սիրելի մայր, ըսաւ Մարիամ: Իմ դաստիարակութեանս համար ըրած խնամքդ շատ աւելի դժուարին և կարևոր էին քան թէ իմ մշակած ծաղիկներուս աշխատութիւնը: Անոնց գեղեցիկ ծաղիկը իմ ըրած խնամքս վարձատրեց. իսկ ես ինչպէս ուրեմն կրնամ անոնցմէ նուազ երախտապարտ ըլլալ: Ընդունէ ուրեմն իմ քեզի տուած ամեն նեղութիւններուս համար ցուցըցած խորին շնորհակալութիւնս:

Մօրը սիրաւ ելելով և արցունք թափելով ու քաղցր մխիթարութեան ըզգացմունքով լեցուած, գրկեց այն խնայի, պարկեշտ և երախտագէտ դեռահասակ աղջկը ըսելով: Սիրելի աղջիկս, այս ծաղիկները որ այնչափ խնամքով մշակելիք ու մեծցուցիր, և որոնք քեզի այնպիսի գեղեցիկ խորատնեցու պատճառ եղան, ասկէ ետեւ ի պատիւ քեզի, Մարիամու ծաղիկնք կոչուին:

Ո՛հ, ոչ, պատասխանեց Մարիամ, այլ պէտք է որ քու անուանովը կոչուին, որ արդէն հոս զձագրուած կը տեսնես, ուստի Մարգարիտ անունը պիտի տամ անոնց:

Բայց մայրը միշտ Մարիամայ ծաղիկ կը կոչէր զանոնք. իսկ ընդ հակառակն Մարիամ, և իրմէ վերջը շատերը, այս գեղեցիկ ծաղիկներուն Մարգարիտ անունը տուին, որ ինչուան մեր ժամանակները անփոփոխ մնաց:

ՇԸՄԻՑ:

ՊՐԱՀՄԱՆ ՃԱՆԱՊԱՆՀՈՐԴ

(Տես երես 110.)

Այս աշխարհիս մեծաման կամ օգտակար հիմնադրութեանց մէջ մեծաշէն պալատ մըն ալ կայ ծեր զինուորաց համար որոշած, որ այնչափ հուշա-

կեալ յաղթութեց կենդանի նշխարքն են: Ուրիշ բան չես տեսներ հոն՝ բայց ծայրատաժ և խեղճալ անձինք բայց սրտերնին լի է արի և եռանդուն զգացմունքներով, որք առ հայրենիս ըրած անպայման անձնանւիրութեանը հետեանք են:

Ես որ խաղաղ ճանապարհորդ մըն եմ և երբեք պատերազմի աղաղակ չեմ լսած, կը սիրեմ այս մարդիկն որ շատ անգամ մահը աչքերնին առած աներկիւղ արհամարհած են զվտանգը. որոնք իրենց սրտին մեծաման թափը հաճելու համար սիրով իրենց մնացած կեանքն ալ կու տային: Աշխատաւոր մարդկանց ընկերութե մէջէն՝ որք քրտինքին իրենց նմաններուն համար կը թափեն, ես անոնցը աւելի կը մեծարեմ որ իրենց արիւնն ալ կը թափեն ուրիշներուն համար: Ուրիշ մէկ կերպով վերաբերութիւն չունիմ հետերնին, բայց միայն ճշմարտութեան սիրովը. սակայն ինչպէս որ ժու շատ անգամ ինծի ըսած ես, ճշմարտութեան սէրը բաւական է զամեն մարդ զօղելու: Ուստի և այս ծեր խեղճներու մէջ, զորոնք հոս անկալ կը կոչեն, բարեկամ մ'ունիմ, և բարեկամ մը այնքան անկեղծ, որ առանց իմանալու՝ մարդկութեան սիրոյն մի և նոյն մտածութեամբ կապուած ենք մէկմէկու հետ: Միայն մինչդեռ ես հին ժամանակի իմաստութիւնը գտնելու հետեամուտ եմ, ինքը իր երկրին նոր իմաստութիւնը կը փնտռէ: Կարելի է զանոնք միացնել:

Օր մը որ այն պղտի պարտէզները տեսնելու գնացեր էի, զորոնք այնչափ մեծանուն անձինք միակեժ են, զորովական խորթանք հայրենեացս ծաղկի մը վրայ կը նայէի, որուն ծեր մը ջուր կու տար, աչքերս արցունքով կը լեցուէին: Անշուշտ ծեր սպայն որ և պարտէզին տէրը, զորունի հայեցումքով մը նայած էր ինծի. բայց կարծէի թէ ամենեւին ուշադրութիւն դրած չէր ինծի: Անտարակոյս բարի մարդը թախծելոյն սիրտը՝ առանց անոր իմանալուն՝ կը գուշակէ: Մինչդեռ իրմէն հե-